Ս.Երիցյան, Ռ.Հարությունյան, Լ.Շահինյան, Ֆ.Կարապետյան

ԵՐԿԱԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈԼԻԿԻ ՏԵՐԵՎՆԵՐՈՒՄ ՔԼՈՐՈՖԻԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՆՀՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիա,
ընդհանուր երկրագործության ամբիոն

Ներկայացվող աշխատանքի նպատակն է Վայքի մարզում եղած տուֆավազաքար լցանյութի պայմաններում պարզել երկաթ պարունակող տարբեր միացությունների (երկաթի երկարժեք և եռարժեք սուլֆատ, կոմպլեքսոն, դիէթիլեն եռամին հինգքացախաթթվի երկաթի կոմպլեքս՝ Fe-ԴԵՀՔ) ազդեցությունը լոլիկի աճի, տերևներում քլորոֆիլի պարունակության և բերքատվության վրա: Օգտագործվել է Դավթյանի սննդալուծույթը, որտեղ, ըստ տարբերակների, փոխվել են միայն երկաթի միացությունները:

Ստացված տվյալներից պարզվել է, որ հիդրոպոնիկ անոթներում լոլիկի աճը, տերևներում քլորոֆիլի պարունակությունը և պտղի բերքը, մնացած հավասար պայմանների դեպքում, կախված է երկաթ պարունակող միացությունից: Նշված բոլոր ցուցանիշներով պակաս արդյունավետ է, երբ սննդարար լուծույթում օգտագործվել է եռարժեք, ապա երկարժեք երկաթի սուլֆատ: Բարձր արդյունավետություն ապահովել են Fe-ԴԵՀՔ և կոմպլեքսոնը:

Այսպես, եթե 1-ին տարբերակում 1 գ չոր տերևի հաշվով քլորոֆիլը վեգետացիայի ընթացքում կազմել է 3,2; 2,6; 2,0 մգ, 2-րդում՝ 4,1; 4,0; 2,6 մգ, ապա 3-րդ և 4-րդ տարբերակներում այն եղել է անհամեմատ բարձր և նույն ժամկետներում կազմել է 5,2-5,3; 4,2-4,4 և 3,0-3,3 մգ: Այդ տարբերակներում էլ բույսերն ունեցել են ավելի լավ աճ և կազմակերպել են ավելի շատ բերք՝ մեկ բույսի հաշվով 2,4-2,6 կգ, 1-ին և 2-րդ տարբերակների 1,7-1,8 կգ-ի դիմաց:

S.Yeritsyan, R.Harutunyan, L.Shahinyan, F.Karapetyan

INFLUENCE OF IRON CONTAINING FERTILIZERES ON THE CONTENT AND CROP CAPACITY OF CHLOROPHYLL IN THE LEAVES OF TOMATO UNDER HYDROPONIC CONDITIONS

Summary

The experimental data indicates that the best result was observed in trials with complexon and the worst result with $FeSO_4$ and $Fe_2(SO_4)_3$.